

# ՉԱՓԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Սակաւապետը հանգիստ ու անտրտունջ իր կեանքը կը վարէ, որովհետեւ կարեւոր բաները, որոնց կարիքը անշուշտ ունի, սակաւ են եւ զանոնք դիւրաւ կը գտնէ: Չի տանջուիր սնափառութիւնը սնուցած աւելորդութիւններ ձեռք բերելու համար եւ անոնք չունենալուն, որովհետեւ անոնց կարիքը չունի: Ով որ շատ բանի կարիքը ունի, կը ջանայ ձեռք բերել զանոնք եւ երբ չի կրնար՝ կը տանջուի ու կը տրտնջայ: Իսկ տրտնջումը ոչ միայն միտքը կ'ամբոխէ ու կեանքը կը մաշեցնէ, այլեւ ընկերները կը ձանձրաձնէ, ամէնքը կը զգուշանաւ ու կը հեռանան տրտնջող բերանէն: Ուստի ոչ ոք չի փափաքիր տրտնջողի հետ կենցաղավարել կամ անոր բարիք գործել, որովհետեւ տրտնջացողին բարքը աս է՝ բարերարէն դժգոհ ըլլալ, եթէ նոյնիսկ շատ երախտիք ընդունած ըլլայ անկէ, եւ չափազանց շատ տրտնջալ, եթէ կարճ ժամանակ անոր բարերարութեանը չէ արժանացած:

Համեստը լաւ ապրելու համար կը բաւարարուի կարեւոր սակաւ բաներով, ուստի միշտ խաղաղ եւ ուրախ է: Իսկ փառամոլը անդադար տանջանքի մէջ է դրամ ձեռք բերելու ճոխութիւններու համար, ուստի հոգերէն ու զբաղումներէն հանգիստ չունենալով՝ կը տառապի: Այլ չենք ըսեր, որ շատ անգամ շահ ունենալու համար անվայել միջոցներ կը բանեցնէ, որպէսզի իր պատիւը որեւէ ձեռով չպակսի, այս պատճառով ալ խղճմտանքէն չարաչար կը տանջուի: Ուստի աւելի լաւ է չափաւոր ու համեստ ըլլալ եւ զուարթ միշտ ապրիլ, քան հարուստ ու փառամոլ ըլլալ եւ մտքով ու մարմնով տանջուիլ:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

## ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈՂԻՆԵՐԸ, ԳԵԼԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԷՆ

### ԿԱՆԱՐԳՈՒԹԵԱՆ ՀՏԵՒԱՆՔՆԵՐ

#### ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Փոմբրանիայէն կը գրեն եւ կը խնդրեն աղօթել կնոջ մը համար, որ տարիներով հալածուած է այն մտածումէն՝ թէ զինք կ'ուզեն թունաւորել: Ամէն շաբաթ կը դիմէ հոգեբու-ժարանի տնօրէնին, որ զինք հիւանդանոց պառկեցնեն: Հիւանդը բուժելու անոր բոլոր ջանքերը ապարդիւն անցան: Այդ սեւեռուն գաղափարին պատճառով խեղճ կիներ մարդոց մէջ մտնել իսկ չի կրնար: Անգամ մը, երբ այդ կնոջ հետ կը զրուցէի իր տարօրինակ հիւանդութեան մասին, պարզուեցաւ որ ժամանակին «կարմիր քամին» բուժելու համար հմայողի մը օգնութեան դիմեր է: Կինը հաւատացեալ էր՝ եկեղեցւոյ անդամ, սակայն անոր մէջ որեւէ գէշ բան չէր տեսներ: Շատ դժուար, նոյնիսկ անկարելի էր իրեն բացատրել, որ յատկապէս այդ եղած է իր հոգեկան խռովքին պատճառը:

Սատանային խորամանկութիւնն է անիկա, երբ կ'ըսեն՝ թէ անոր մէջ որեւէ գէշ բան չկայ: Եթէ մարդիկ հասկնային ասիկա, կ'ապաշխարէին եւ Աստուծոյ կ'ապաւինէին եւ Սատանային իշխանութիւնը կը վերնար: Ճիշդ ատիկա արգիլելու համար է որ Սատանան կ'ըսէ. «Պատճառը ուրիշ է»:

Եւ սակայն՝ պատճառը ճիշդ ատիկա է: Կը կարծեմ որ շատ մը մարդոց...

Շարունակելի

## ՉԱՍՏԷ.

ՃՐԱԳ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 - Tel/Fax: 01-258300 - E-mail: jerak@live.com



## ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԵԴ ԽՄ ՈՏԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս., 119-105)

Ե. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ՝ 8 ՅՈՒԼԻՍ, 2012

ԹԻՒ 28

### ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 14.13-21

Երբ Յիսուս Յովհաննէսի գլխատումը լսեց, նաւակով մեկնեցաւ այդտեղէն եւ առանձին գնաց ամայի վայր մը: Շրջանի քաղաքներուն բնակիչները լսելով ասիկա, քալելով հետեւեցան իրեն:

Երբ Յիսուս նաւակէն դուրս ելաւ, տեսաւ մեծ բազմութիւնը, զիժաց անոնց վրայ եւ հիւանդները բժշկեց:

Երեկոյեան, իր աշակերտները իրեն մօտեցան եւ ըսին. «Ամայի տեղ ենք եւ ժամանակն ալ ուշ է. արձակէ՛ ժողովուրդը, որպէսզի երթան շրջակայ գիւղերը իրենց համար ուտելիք գնելու»:

Յիսուս ըսաւ. «Ինչո՞ւ իրենք երթան: Դուք տուէ՛ք անոնց ուտելիքը»:

Անոնք ըսին Յիսուսի. «Հոս գրեթէ ոչինչ ունինք, բացի հինգ հացէ եւ երկու ձուկէ»:

Յիսուս ըսաւ. «Հոս բերէ՛ք ասոնք»: Եւ հրամայեց որ ժողովուրդը նստեցնեն խոտին վրայ: Ապա առաւ հինգ հացը եւ երկու ձուկը, փառք տուաւ Աստուծոյ, օրհնեց, կտրեց հացերը եւ տուաւ աշակերտներուն, որոնք բաշխեցին ժողովուրդին: Բոլորն ալ կերան ու կշտացան. եւ աշակերտները աւելցած կտորները հաւաքելով՝ տասներկու սակաւ լեցուցին: Իսկ ուտողներուն թիւը շուրջ հինգ հազար էր, կիներն ու մանուկները չհաշուած:

### ՍՈՒՐԲ ԳԻՐԲԸ ԿԸ ՓՈԽԷ ՄԵՐ ԿԵԱՆՔԸ

Կը պատմուի թէ հիւսիսային Ափրիկէի մէջ մարդակեր մը դարձեալ կու գայ եւ ինքզինք կը նուիրէ աղօթքի եւ Սուրբ Գիրքի ընթերցանութեան: Օր մը հանրային պարտէզի մը մէջ նստած երբ Սուրբ Գիրք կը կարդար, Ամբրիկացի մը կը տեսնէ զինք եւ ծաղրելով կ'ըսէ. «Դու'ն, ո՛վ Ափրիկեցի, դո՞ւն ալ սկսար Սուրբ Գիրք կարդալ»: Նորագարձ Ափրիկեցին կը պատասխանէ ըսելով. «Եթէ Սուրբ Գիրք չկարդայի, դուն հիմա իմ ֆաշա եղած պիտի ըլլայիր»: Այս պատմութիւնը մեզի կը տրվեցնէ, թէ ինչպէս Սուրբ Գիրքը կրնայ փոխել մարդուն կեանքն ու նկարագիրը: Ասիկա մարդակեր մարդը կը վերածէ մարդասէր մարդու:

## ԶԱՔԱՐԻԱ ՄԱՐԳԱՐԵ

Զափարիա անունը թարգմանաբար կը նշանակէ՝ «Ան, որուն կը յիշէ Տէրը» եւ կամ «Տէրը կը յիշէ»: Այս անունով Հին Կտակարանին մէջ յիշուած են աւելի քան քսան անհատ: Սակայն Զափարիա մարգարէի անունը կը յիշատակուի Անգէի անուն կողմէն, որպէս Տանարի վերակառուցման գործի ջատագով: Ան իր մարգարէական առաքելութիւնը իրականացուցած է Դարեհի տիրապետութեան երկրորդ տարին, մեր թուարկութենէն առաջ 520-516 թուականներուն միջեւ: Տանարը սկսած էր վերակառուցուիլ, երբ ան կը յայտարարէ իր առաջին մարգարէութիւնը, ապա՝ երկրորդը եւ երրորդը: Մարգարէն իր աստուածային կանխասացութիւններով քաջալեր կը հանդիսանայ ժողովուրդին, կը մխիթարէ զանոնք աստուածային առատ օրհնութիւններով եւ սրբարանի վերականգման յոյսով, ինչպէս նաեւ՝ կը յիշեցնէ անոնց ընտրեալ ժողովուրդ ըլլալու հանգամանքը:

Զափարիայի մարգարէութիւնը, որ տասնմէկերորդն է Հին Կտակարանի մարգարէութիւններու ժողովածուներու շարքին, կ'ընդգրկէ տասնչորս գլուխ եւ կը բաժնուի երկու մասի: Առաջին մասը կը բովանդակէ ութ տեսիլներ, որոնք իրականութեան մէջ երկնային պատասխաններ են երկրին ու այդ ժամանակաշրջանը յուզող հարցերուն: Այս տեսիլներէն ետք, Աստուած խորհրդանշական գործողութեամբ մը Զափարիային ցոյց կու տայ, որ մարգարէական բոլոր հեռանկարները կը տանին դէպի Մեսիային յայտնութիւնը: Ապա, յաջորդ մասին մէջ կը բացայայտուի Մեսիային երկրորդ փառաւոր գալուստը եւ Անոր ընկալումը երբայեցի ժողովուրդին կողմէ: Ընտրեալ ժողովուրդի մնացորդացը դարձի կու գայ եւ կը մաքրագործուի:

Կը հաստատուի Աստուծոյ թագաւորութիւնը, թշնամի ժողովուրդները ահեղ դատաստանի կ'ենթարկուին եւ Երուսաղէմը կը դառնայ ազգերու հոգեւոր կեանքի կեդրոնը:

### ԶԱՔԱՐԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹԵԱՆ ԴԱՏԳԱՍԸ

Զափարիայի մարգարէութիւնը, որ ժամանակագրական առումով ամենամօտն է Նոր Կտակարանի դարաշրջանին, կը յայտնէ թէ թշնամիները շուտով պիտի պատժուին եւ Երուսաղէմը պիտի վերակառուցուի: Հոգեւոր եւ պետական իշխանութիւնները պիտի մաքրագործուին եւ օր մը անոնք պիտի միաւորուին Մեսիայի անձին մէջ, որ առաջին անգամ մերժուելէ ետք, երկրորդ անգամ պիտի յայտնուի փառով, իշխելու համար ամբողջ մարդկութեան վրայ:

Մարգարէն, որպէս վկայ, Աստուծոյ միջամտութիւններն ու ծրագիրները կը հաղորդէ մարդոց: Հին դարերուն, Աստուած մարգարէներուն հետ ուղղակիօրէն կը հաղորդակցէր խօսքով կամ տեսիլով, սակայն Զափարիայի գիրքին մէջ Աստուած այլեւս անձնապէս չի յայտնուիր, այլ՝ իր երկնային ծրագիրներն ու մտադրութիւնները կը յայտնէ իր հրեշտակներուն միջոցով:

Զափարիայի մարգարէութիւնը ցոյց կու տայ վերանորոգուած ժողովուրդի նակատագիրը Մեսիայի երկրորդ Գալուստեան ժամանակ եւ կը նոյնանայ Մեսիայի անձին վերաբերող այլ մարգարէներու հաղորդած տեղեկութիւններուն եւ մարգարէութիւններուն:

Թող Մարգարէին սրբահունչ խօսքերը վերանորոգեն եւ Ս. Հոգիով լեցնեն մեր սրտերն ու հոգիները, առանկ ամբարանդեալ մեր հաւատքը Հայ Եկեղեցւոյ բարօրութեան ի խնդիր:

Հայ Եկեղեցւոյ տօնացոյցի համաձայն այս տարի Զափարիա Մարգարէին տօնը կը գուգադիպի Երեւանի շաբթի՝ 3 Յուլիս, 2012-ին:

## ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

### ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ ՆԱՄԱԿ ՓՈԽ ԴՐԱՄԻ ԵՒ ՏՈԿՈՍԻ ՄԱՍԻՆ

Ինչո՞ւ կը տարածուիս. ինչո՞ւ անօրէնութիւն կը գործես, ո՞վ թշուառ կամ. ինչո՞ւ կը հաւաքես անպողպեք դրամը, որը պատնառ կը դառնայ յաւիտեանական գեհեմին: Աչքիդ առջեւ բեր Գրիստոսի դատաստանը: Ի՞նչ պատասխան պիտի տաս դատաւորին, երբ տոկոսներու պատնառ սնանկացածները շուրջդ հաւաքուին եւ քեզ ամբաստանեն. ի՞նչ պիտի ընես, ո՞վ թշուառ կամ եւ ինչպէ՞ս պիտի աղաչես: Հոն ո՛չ աղօթք, ո՛չ ինչք եւ ոչ ալ հարստութիւն գոյութիւն ունին. գրկուած եւ բարեկամներէդ, հեռու եւ քեզի օգնողներէն, առանց պաշտպանի, առանց պատասխանի, ամօթահար, տխուր, դժբախտ, միայնակ եւ անհամարձակ ես. ըւր որ աչքդ դարձնես, յստակ կերպով պիտի տեսնես քու գործած չարիքիդ պատկերը: Հոս կը տեսնես որբերուն արտասուքը, հոն՝ այրիներու հառաչանքը, այլուր՝ աղփատ մը, գոր դուն ծեծեցիր, ծառաներ, գորոնք բարկացուցիր: Բոլորը քու դէմդ պիտի ելլեն եւ տեսարար քեզի չարիք հասցնելու համար անգութ կերպով հետդ պիտի շրջին, որովհետեւ ինչպէս որ շուքը անբաժան է մարդէն, նոյնպէս ալ մեղքերը անբաժան կերպով կը հետեւին մարդուն. եւ անոնք ժողովուրդին մէջ յստակ կերպով ցոյց պիտի տան քու բազում մեղքերուդ պատկերը: Այնպէս որ, հոն՝ ոչ ոք կրնայ ուրանալ իր չար գործերուն պղծութիւնը. չարախօս լեզու կը կապուի, անօրէն բերանը կը լռէ, յանցաւորը կը դողայ, որովհետեւ իւրաքանչիւրին գործած մեղքերը անաղմուկ կերպով վկայութիւն են իր կատարած գործերուն. ինչպէս որ ոչխարներուն մէջ սեւ այծերը կ'երեւան, նոյնպէս ալ մեղաւոր անձերը մութ գգեստներով, լուսազարդուած հրապարակին վրայ պիտի երեւան:

(Ճառեր Յովհան Մանդակունի)

## ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԳԱՏՈՒ

### ՄԵՐ ՓԱՌԱՒՈՐ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Իմ խաղաղութիւնս կը թողում ձեզի: Յովհ. 14.27

*Երբեք խորհած ես, թէ երբ Յիսուս մեռաւ խաչին վրայ, քեզի կտակ մը թողուց: Թերեւս ոեւէ մէկը տակաւին քեզ յիշած չէր իր կտակին մէջ: Մի վշտանար ասոր համար: Եթէ դուն Սատանային իշխանութենէն Տէր Յիսուսի թագաւորութեան անցած ես, Անիկա քեզ իր կտակին մէջ յիշած է: Ան իր մարմինը Արիմաթացի Յովսէփին ձգեց, իր մայրը՝ Զերեղէոսի որդւոյն Յովհաննէսի եւ իր հոգին՝ Հօրը: Բայց իր աշակերտներուն ըսաւ. «Իմ խաղաղութիւնս կը թողում ձեզի, նաեւ իմ ուրախութիւնս: Ասոնք են իմ ժառանգութիւններս: Ասոնք կու տամ ձեզի»:*

*Հիմա կ'ըսեն, թէ աշխարհի վրայ չկայ կտակ մը որ փաստաբանները չկարենան փոխել եւ կամ բոլորովին անվաւեր ընել: Ես կոչ կ'ուղղեմ ոեւէ մէկուն՝ որ կրնայ փոխել Տէր Յիսուսի ըրած այս կտակը: Անկարելի է: Աշխարհի վրայ ոչ մէկ դատաւոր կամ փաստաբան կրնայ ընել այդ: Տէր Յիսուս յարութիւն առաւ՝ անձամբ կատարելու իր այս կտակը, ապրելով մեր սիրտերուն մէջ: Եթէ Անիկա իր մեռած ատեն մեզի ոսկի կտակած ըլլար, վստահ եմ թէ առաջին դարուն իսկ գողերը զանիկա յափշտակած պիտի ըլլային: Բայց Անիկա իր խաղաղութիւնն ու ուրախութիւնը կտակած է մեզի իր աշակերտներուն, եւ աշխարհի վրայ չկայ ուժ մը որ կրնայ յափշտակել զայն մեզմէ եթէ տեսարար վստահինք իրեն եւ հնազանդինք:*

**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻՆ ԳԻՐՔԵՆ  
3.1-11**

*Ահաւասիկ, Երկնաւոր Զօրքերու Տէրը Հրէաստանն ու Երուսաղէմը պիտի գրկէ իրենց գօրութիւնը եղող նեցուկներէն, հացի եւ ջուրի ամբողջ պաշարէն:*

*Այ պիտի չունենան ո՛չ յաղթ կտրիին ու պատերազմիկ, ո՛չ դատաւոր ու մարգարէ, ո՛չ գուշակ եւ երէց, ո՛չ յիսնապետ ու հիանալի խորհրդատու, ո՛չ իմաստուն մարտարապետ եւ ո՛չ ալ մարպիկ կախարդ:*

*Դեռահաս պատանիներ իշխան պիտի կարգեմ անոնց վրայ եւ քմահանոյքը պիտի ըլլայ անոնց իշխողը:*

*Մարդիկ իրարու պիտի իյնան, ընկերն իր ընկերոջ պիտի կեղեքէ. երիտասարդը արհամարհանձնով պիտի ընդդիմախօսէ ծերին եւ գոեհիկը՝ ազնուականին:*

*Այն ատեն ամէն մէկը իր եղբայրը կամ հօրը ընտանիքին մէկ անդամը պիտի բռնէ եւ ըսէ. «Դուն պատմունքան ունիս, եկուր մեր իշխանը եղի՛ր եւ մեր ուտելիքը դուն հայթայթէ՛»:*

*Իսկ անիկա պիտի պատասխանէ. «Ես ձեզի օգտակար չեմ կրնար ըլլալ, որովհետեւ ո՛չ ուտելիք ունիմ տունս, ո՛չ հագուելիք. այս ժողովուրդին իշխան չեմ ըլլար»:*

*Երուսաղէմը լճուեցաւ եւ Հրէաստանը կործանեցաւ, որովհետեւ իրենց բնակիչները անօրէնութիւն խօսեցան եւ Տիրոջ հակառակ գործեցին:*

*Ուստի իրենց փառքը նսեմացաւ, իրենց երեսէն ամօթը վերցուեցաւ. Սողոմնապիստիւնն ալ իրենց մեղքերով պարծեցան, առանց ծածկելու: Վա՛յ իրենց. իրենք իրենց գլխուն չարիք բերին:*

**Շարունակել Աստուածաշունչէն**

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ  
ՀՌՈՎՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ  
11.13-24**

*Ձեզի՛ հեթանոսներուդ կ'ըսեմ. հեթանոսներու առաքեալ ըլլալու իմ պաշտօնովս կը պարծենամ, մտածելով որ թերեւս այս ձեռով ազգակիցներուս նախանձը գրգռեմ եւ յաջողիմ անոնցմէ ոմանք փրկել: Որովհետեւ, եթէ Աստուած զանոնք մերժեց որպէսզի հեթանոս աշխարհը հաշտեցնէ իրեն հետ, կը նշանակէ թէ երբ վերստին ընդունի զանոնք՝ մեռելներու յարութիւնը տեղի պիտի ունենայ:*

*Թէ Աստուած վերստին պիտի ընդունի զանոնք՝ յստակ է, որովհետեւ երբ բերքին երախայրիքը Աստուծոյ ընծայուած է, կը նշանակէ թէ ամբողջը Աստուծոյ ընծայուած է. նոյնպէս, եթէ ծառին արմատները Աստուծոյ նուիրուած են, կը նշանակէ թէ միւրերն ալ Աստուծոյ նուիրուած են: Ճիշդ է որ այդ միւրերէն ոմանք կտրուեցան, եւ դուն որ վայրի ձիթենի մըն էիր՝ անոնց տեղ պատուաստուեցար եւ այդ ձիթենիին արմատներէն եկող հարուստ աւիշը ըմպեցիր: Բայց մի՛ պարծենար եւ մի՛ արհամարհեք կոտորած միւրերը. մի՛ մոռնար որ դո՛ւն արմատներուն վրայ հաստատուած ես եւ ո՛չ թէ արմատները բու վրայ: Հիմա պիտի ըսես. «Աստուած այդ միւրերը կտրեց զի՛ս պատուաստելու համար»: Իրաւ է. անոնք՝ հրեաները կտրուեցան՝ որովհետեւ չհաւատացին եւ դուն՝ հեթանոսդ, հաւատալուդ համար արմատին վրայ հաստատուեցար. բայց մի՛ հպարտանար, այլ վախցի՛ր:*

**ՀԱՐՈՒՆԱԿԵԼ  
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ  
ՄՍՏՈՒՄԾԱՇՈՒՆՉԷՆ:**